




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր

ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ



Կ'վայելէ

Խ . Հ . Արտասահմ . Տնտես . Պատկերակութեան

Հովանաւորութիւնը

1922

Նիւ Եօրֆ

361

Խ-84

361
h-84

Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

I

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՆՈՒՆԸ

Ընկերութեան անունն է՝ Խորհրդային Հայաստանի Տեխնիկական Օգնութեան Ընկերութիւն. կըրճատուած ձեւն է՝ Խ. Հ. ՏԵԽ. ՕԳ. Ընկ.: Անունի անգլիերէն գործածութիւնն է՝ Society For Technical Aid to Soviet Armenia.

II

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԸ

Ընկերութեան խորհրդանշանն է՝ կրկնակ չըրճանակներու մէջ Արարատը, ստորոտը՝ Հայ գիւղացին արօրով. երկու կողմերը ցօրենի խուրձեր. ասոնց բոլորովքը կրկնակ չըջանակներու միջեւ՝ ընկերութեան անունը. չըջանակներէն դուրս՝ գործարանի ծխացող ծխնելոյղներ, վայրաչարժ, փոխադրական զանազան միջոցներ եւ երկրագործական մեքենաներ:

III

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Խ. Հ. ՏԵԽ. ՕԳ. Ընկերութիւնը կազմակերպ-

ւած է եւ կ'դործէ Միացեալ Նահանգներու եւ Կանադայի մէջ:

IV

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ընկերութեան նպատակն է՝ Խորհրդային Հայաստանի տնտեսական վերաշինութեանը դործնական օժանդակութիւն բերել Ամերիկայէն:

V

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

1. Արձանագրել եւ կազմակերպել Միացեալ Նահանգներու եւ Կանադայի մէջ ապրող բոլոր այն բանւորները, արհեստավորները եւ մասնագէտները, որոնք կրնան օգտակար ուժեր դառնալ տեխնիկական-տնտեսական օժանդակութեան համար, եւ ցանկութիւն կաշտեն՝ վերադառնալ Խորհրդային Հայաստան եւ մասնակցիլ անոր վերաշինութեան դործին:

2. Հաւաքել մեքենագիտութեան, հողագործութեան, տեխնիկայի եւ ճարտարաւեստի զանազան ճիւղերու վերաբերեալ գրականութիւն, մասնաւոր հետազոտութիւններ, գծագրութիւն եւ այլն: Ի պահանջել հարկին՝ այդ ամէնը ուղարկել երկիր եւ կամ պահել այստեղ ու դործածել:

3. Հիմնել դպրոցներ, դասընթացներ, արհեստանոցներ, աշխատանոցներ՝ երկիր մեկնիլ փափա-

քողներուն տալու համար հիմնական եւ նպատակաւոր մար պատրաստութիւն:

4. Կազմակերպել տեխնիկական արշաւախմբեր՝ պատրաստի ուժերէն երկիր ուղարկելու համար:

5. Ձանալ զնացող խմբերը զինել անհրաժեշտ դործիքներով, մեքենաներով եւ ամեն տեսակ նիւթերով ու պիտոյքներով, որպէսզի անոնք կարենան իրենց սովորածները լաւագոյն եւ արդիւնաւոր կերպով դործադրել երկրի մէջ:

VI

ԴՐՍՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Ընկերութեան գրամական միջոցները եւ աղբիւրներն են՝

ա. Անդամավճարներ

բ. Անհատական նւէրներ

գ. Հանդանակութիւններ

դ. Ձանազան ուրիշ ձեռնարկներ, ինչպէս օրինակ՝ խնջոյքներէ, ներկայացումներէ, երեկոյթներէ, դասախօսութիւններէ, վիճակահանութիւններէ գոյացած գումարներ:

ե. Չափաւոր վճարումներ՝ ընկերութեան դասընթացներէ, դպրոցներէ, աշխատանոցներէ օգտւելու համար:

VII

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ
ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

58626-67

Անդամներու իրաւունքները եւ
պարտականութիւնները

1. Ամեն անհատ (երկու սեռէ)՝ որ ունէ ճարտարաւեստական, տեխնիկական, մասնագիտական հմտութիւն ունի կամ կուզէ իւրացնել, կընդունի Ընկերութեան ծրագիրը եւ ցանկութիւն կ'յայտնէ վերադառնալ Խորհրդային Հայաստան՝ վերաշինութեան գործին մասնակցելու համար, կրնայ անդամակցիլ Ընկերութեանս:

2. Տեխնիկական եւ մասնագիտական հմտութիւններ ձեռք բերել կամ եղողներէն զատ՝ Ընկերութեանս կրնան անդամակցիլ նաեւ այնպիսի անձինք, որոնք նիւթապէս եւ բարոյապէս կ'խրախուսեն Ընկերութեան ձեռնարկները եւ կազմակերպական մնացեալ բոլոր պարտականութիւնները կը կատարեն: Այդպիսի անդամները կ'կոչուին օժանդակ անդամներ:

3. Ընկերութեանս անդամակցողը նախ պէտք է լեցնէ այդ նպատակի եւ վիճակագրութեան համար պատրաստած դիմումագիրը եւ ստորագրելով վերադարձնէ դայն Մասնաճիւղի վարչութեան: Վերջինս պատճէնն առնելով իսկականը կ'ուղարկէ Կեդ. Գործ. Մարմին, մասնաճիւղի նկատողութիւնները աւելցնելով վրան:

4. Դիմումագիրը ստորագրած քիտի ըլլայ նաեւ երկու յանձնարարող անդամներու կողմէ, որոնք ընկերութեանս անդամակցած պիտի ըլլան ոչ պակաս քան երկու ամիս:

5. Այն անդամները, որոնք յանձնարարած չեն, կրնան ընդունիլ միայն ընկերութեան Կեդրոնական Գործադիր Մարմնի որոշումով:

6. Նոր մասնաճիւղ կազմելու ժամանակ՝ յանձնարարութեան պէտք չկայ:

7. Ընկերութեան ամեն անդամ եւ օժանդակ-անդամ կ'մասնակցի իր պատկան մասնաճիւղի Ժողովներուն՝ քէի իրաւունքով: Կրնայ ընտրել եւ ընտրուիլ համապատասխան ամեն պաշտօնի համար:

8. Օժանդակ-անդամները ոչ մասնաճիւղի եւ ոչ ալ վարչութեան կէսէն աւելին չեն կրնար կազմել:

9. Անդամ մը կամ օժանդակ-անդամ մը ուրիշ մասնաճիւղի մը կամ խումբի մը Ժողովներուն կըրնայ խորհրդակցական ձայնով մասնակցիլ՝ ներկայացնելով համապատասխան վաւերացութիւն (անդամատետր կամ ուրիշ նման գրութիւն) եւ կամ ընկերութեան մէկ անդամի կողմէ վկայւելով:

10. Ընկերութեան ամեն մէկ անդամը պարտաւոր է ունենալ ընկերութեան անդամատետր:

11. Մասնաճիւղէ մը կամ մասնագիտական ու տեխնիկական խումբէ մը ուրիշ մասնաճիւղ կամ խումբ փոխադրուելու համար պէտք է առնել պատկան մասնաճիւղի հաւանութիւնը:

12. Ամեն անդամ պարտաւոր է վճարել մուտքի տուրք նւազագոյն 50 սէնթ. եւ ամսական 50 սէնթ անդամավճար:

13. Դասընթացներու եւ աշխատանոցներու համար մասնաճիւղի վարչութիւնը կնշանակէ չա-

վաւոր վճարումներ՝ Կեզր. Գործադիր Մարմնի
Հաւանութեամբ:

14. Տուրքերու չ'վճարելու պատճառով հրաժարած կամ հրաժարեցած անգամ մը կամ օժանդականգամ մը կրնայ կրկին ընդունել, երբ իր յետեւի բոլոր տուրքերը վճարէ: Եթէ անգամակցութենէ դադարեցումը վեց ամսէն աւելի է եղած, պիտի վճարէ նաեւ մուտք:

15. Խորհրդային Հայաստանի իշխանութեան գէմ խօսքով կամ գործով պայքարողները չեն կրնար Խ. Հ. Տեխ. Օգ. Ընկերութեան անդամ կամ օժանդականգամ դառնալ:

VII

ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐ

1. Ընկերութեանս կազմակերպական միաւորն է մասնաճիւղը որ կ'ըզկանայ առնուազն 5 անդամներէ: 5-էն պակաս թիւ ներկայացնող տեղի անդամները կ'միանան մօտակայ քաղաքի մասնաճիւղին:

2. Բացառիկ պարագաներու տակ ընկերութեան Կեզրոնական Գործ. Մարմնի Հաւանութեամբ կարելի է կազմել 3 հոգիէ բաղկացած խմբեր, որոնք ուղղակի յարարելութեան մէջ կրլլան Կեզր. Գործ. Մարմնի հետ եւ կամ անոր կարգադրութեամբ ուրիշ ուեէ մարմնի հետ:

3. Կ. Գ. Մարմնի Հաւանութեամբ, միեւնոյն քաղաքի մէջ կարելի է ունենալ մէկէ աւելի մասնաճիւղեր:

4. Ամեն մասնաճիւղ կ'ըզկանայ մէկ կամ աւելի մասնաղիտական, տեխնիկական խմբերէ, որոնք կ'կազմին իրենց աշխատանքներու համապատասխան կերպով:

5. Մասնաճիւղը կ'ունենայ իր վարչական մարմինը, բաղկացած երեք կամ հինգ հոգիէ՝ ըստ մասնաճիւղի մեծութեան եւ գործերու ընդարձակութեան:

6. Մասնաճիւղի վարչական մարմինը կ'վարչական կերպով գործերը եւ պատասխանատու է գործերու ըմթացքին համար: Իւրաքանչիւր տեխնիկական-մասնաղիտական խումբ կ'ունենայ իր ներկայացուցիչը վարչական մարմնի մէջ:

7. Մասնաճիւղը իր վարչական մարմնի կամ ուրիշ յանձնախումբերու միջոցաւ կ'արձանագրէ եւ կ'կազմակերպէ իր սահմաններուն մէջ եղած տեխնիկական եւ ճարտարարեւտական ուժերը. կ'սարքէ ընդհանուր զարգացողական բնոյթ ունեցող կամ մասնաղիտական դասընթացքներ՝ նախօրօք Կ. Գ. Մարմնի եւ Կրթական մարմնի թելադրութիւնները առնելով:

8. Մասնաճիւղերը Կեզրոն. Գործ. Մարմնին կուղարկեն նոր անդամներու բոլոր լեցւած զիմումնադրերը, պատճէնները իրենց մօտ պահելով:

9. Մասնաճիւղերը պարտաւոր են անդամական ժողով գումարել առնուազն երկու շաբաթ մէկ անգամ:

10. Մասնաճիւղերը իրաւունք չունին ընկերու-

թեան անուևով հանդանակութիւն ընկելու առանց
Կեդր. Գործ. Մարմնի հաւանութեան:

11. Մասնաճիւղերը պարտաւոր են դանձաւ
անդամալծարներու կէսը ուղարկել Կեդր. Գործ.
Մարմնին, իսկ մնացեալ կէսը կրնան գործածել տե-
ղական պէտքերու համար:

12. Մասնաճիւղերու պատրաստած խմբերը
Խորհրդային Հայաստան ուղարկելու համար պիտի
յանձնարարւին Կեդր. Գ. Մ. -ի կողմէ եւ ուղարկւին
անոր միջոցով:

13. Մասնաճիւղերը երեք ամիսը անդամ մը ի-
րենց գործունէութեան համար տեղեկագիր եւ հաշ-
ւեցոյց պիտի ներկայացնեն Կեդր. Գործ. Մարմնին:

14. Բոլոր մասնաճիւղերը կ'ունենան միատեսակ
կնիք՝ որ կ'ուղարկւի Խ. Հ. Տեխ. Օդ. Ընկերու-
թեան Կեդրոնական Գ. Մ. -ի կողմէ:

15. Ուել մասնաճիւղի գոյութեան դադարման
պարագային անոր մօտ եղած բոլոր գոյքերը, դը-
րամը, եւ այլն կ'փոխանցուի Խ. Հ. Տեխ. Օդ. Ըն-
կերութեան Կեդր. Գործ. Մարմնին:

IX

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻՆ

Կազմը, Իրաւունքները, Պարտականութիւնները

1. Կեդր. Գործադիր Մարմինը ընկերութեանս
բարձրագոյն վարիչ մարմինն է, բաղկացած՝ 7 ան-
դամներէ եւ 2 փոխ-անդամներէ, որոնք կ'ընտրուին
ընկերութեանս Պատգմ. Ժողովէն եւ կ'վարեն ընկե-

րութեան գործերը Պատգմ. Ժողովի զծած սահման-
ներու մէջ մէկ տարւան ժամանակաշրջանով:

2. Կեդր. Գործ. Մարմնի ուել մէկ անդամի
հրաժարելու կամ հեռանալու պարագային՝ առա-
ւելագոյն քէէ ստացած փոխ-անդամը կ'անցնի անոր
տեղը:

3. Կեդրոնական Գ. Մ. -ը կ'ստանէ ընկերութեան
անդամացանկը, կ'հաւաքէ դպրոցական պիտոյքներ,
անհրաժեշտ գործիքներ եւ մեքենաներ՝ աշխատա-
նոցներու եւ դասընթացներու համար, խմբեր կը
կազմակերպէ եւ երկիր կ'ուղարկէ զանոնք:

4. Խմբերը երկիր ուղարկելու եղանակի վերա-
բերմամբ Կ. Գ. Մ. -ը կ'ընէ յարմար կարգադրու-
թիւններ:

5. Կեդրոնական Գ. Մ. -ը կ'կազմակերպէ նաեւ
նոր մասնաճիւղեր՝ ուղղակի կամ անուղղակի կեր-
պով, առաջ կբերէ փորձագէտներու յանձնախմբեր՝
ընկերութեան աշխատանքները լաւ կերպով կատա-
րելու համար:

6. Կեդրոնական Գ. Մ. -ը կ'վարէ ընկերութեան
համար փրփականտ եւ մասնաճիւղերը տեղեկ
կտահէ ընկերութեան գործին վերաբերմամբ:

7. Կեդր. Գ. Մ. -ը յարաբերութիւն կ'պահէ
Խորհրդային Հայաստանի Կառավարութեան հետ՝
պատկան մարմիններու եւ անձերու միջոցաւ, կը
վայելէ Խորհրդային Հայաստանի Կառավարութեան
հովանաւորութիւնը եւ իր գործունէութիւնը կ'հա-
մաձայնեցնէ Խորհրդային Կառավարութեան պետա-

կան մարմիններու կողմէ ներկայացւած պահանջներուն :

8. Կեդրոնական Գ. Մ. ի անդամներու միջեւ անհամաձայնութիւն ծագելու պարագային , խնդիրները կ'կարգադրւին բոլոր անդամներու հաւաքական քննարկութեամբ : Դժգոհ մընացած կողմը ենթարկուի հանդերձ եղած որոշումին : Կրնայ բողոք ներկայացնել քանի որ ներկայացուցչական ժողովին :

9. Կեդրոնական Գ. Մ. ը երեք ամիսը անգամ մը հաշիւ եւ տեղեկութիւն կտայ մասնաճիւղերուն :

10. Կեդրոնական Գ. Մ. ը իր գործունէութեան համար պատասխանատու է ընկերութեան Պատգմ. Ժողովին :

11. Պատգմ. Ժողովի գումարումէն անմիջապէս յետոյ Կեդրոնական Գ. Մ. ի կողմէն ընկերութեան տարեկան հաշիւը կ'հրատարակի թերթերու մէջ :

12. Կեդր. Գ. Մ. ը կ'կազմէ երեք հոգիէ բաղկացած Կրթական Մարմին մը , որուն անդամներէն մին պէտք է ըլլայ տեխնիկական տնօրէնը :

13. Կեդր. Գ. Մ. ը կ'ընտրէ ընկերութեան տեխնիկական վարիչը եւ փոխ-վարիչը որոնք կ'ընտրեն անոր հրահանգներով :

X

ԿՐԹԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Կեդրոնական Գ. Մ. ի կողմէ ընտրւած եռանդամ Կրթական Մարմնի պարտականութիւնն է՝

կազմակերպել ընդհանուր զարգացողական ընդթունեցող ժողովրդական դաստիարակութիւններ եւ գիտական-կրթական ցոյցեր՝ շարժական պատկերներու միջոցաւ , լոյս ընծայել ժողովրդական , մատչելի հրատարակութիւններ՝ այդ ուղղութեամբ , առանց խառնելու ընկերութեան մասնագիտական կրթութեան գործերուն :

2. Կրթական Մարմինը իրեն օժանդակելու համար յարմար դատած դաստիարակները կ'ընայ հրաւիրել գործելու :

3. Դաստիարակները համաձայն պիտի լինին դործելու զուտ կրթական հոգի վրա , առանց քաղաքական խնդիրներ կապելու իրենց կրթական գործին :

4. Դաստիարակները ընտրելու ժամանակ նկատի չպիտի առնին անոնց քաղաքական հայեացքները՝ այլ թէ անոնք որքան օգտակար կ'ընան ըլլալ՝ ընկերութեան ծրագիրը իրականացնելու գործին :

5. Կրթական Մարմինը կ'ընայ ընկերութեան անդամներէն հրաւիրել խորհրդակցական ձայնով անձնաւորութիւններ , որոնք կ'ընան օգտակար ըլլալ կրթական գործին :

6. Ընկերութեան անդամակցիլը դաստիարակներու համար պարտադիր չէ :

7. Կրթական Մարմնի տրամադրութեան տակ կ'դառնի կրթական որոշ հիմնադրամ , որու քանակը կ'որոշէ ընկերութեան Կեդր. Գ. Մ. ը Կրթական Մարմնի ներկայացուցած նախահաշիւի համեմատ :

8. Այդ պիտե՞նք զուրա , Կրթական Մարմինը

կրնայ ընել ձեռնարկներ՝ դրամական հասոյթներ ստեղծելու համար: Այդպիսի ձեռնարկներ ունէ կերպ չպիտի խաչաձեւեն կեդրոնական Գ. Մ. ի եւ մասնաճիւղերու նման ձեռնարկները:

9. Կրթական Մարմինը պարտաւոր է ունենալ ելեւմուտքի տոմարներ եւ տալ Կեդր. Գ. Մ. ին ամսական հաշիւ:

XI

ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Պատգմ. Ժողովը կներկայացնէ ընկերութեան ըս բարձրագոյն մարմինը:

2. Պատգմ. Ժողովը տեղի կունենայ տարին մէկ անգամ, բոլոր մասնաճիւղերու մասնակցութեամբ:

3. Մինչև 25 անգամ եւ օթանդակ-անգամ ունեցող մասնաճիւղերը կ'ուղարկեն 1 պատգամաւոր: Այնուհետեւ իւրաքանչիւր յաւելւածական 25 անգամի համար մէկ պատգամաւոր:

4. Պատգամաւորներու ճանապարհածախսերը կը հոգացւին մասնաճիւղերու կողմէ տեղական միջոցներով:

5. Հեռաւոր մասնաճիւղերը, խնայողութեան համար կրնան ներկայացուցիչ կարգել Պատգմ. Ժողովի վայրին մօտ գտնուող ուրիշ մասնաճիւղերու անդամներէ:

6. Պատգմ. Ժողովի մէջ ամեն անհատ կրնայ մէկ ձայն միայն ներկայացնել:

7. Արտակարգ Պատգմ. Ժողով կարելի է հրաւիրել:

ա) երբ Կեդր. Գ. Մ. ը միաձայնութեամբ հարկ կտեսնէ:

բ) երբ Կեդր. Գ. Մ. ի անդամներու եւ փոխանդամներու երկու երրորդը եւ մասնաճիւղերու կէսը հաւանին:

գ) երբ ընկերութեան մասնաճիւղերու երկու երրորդը պահանջէ այդ:

8. Պատգմ. Ժողովը իր բոլոր աշխատանքները կատարելէ ետք՝ մասնակցող պատգամաւորներու առ նուազն երկու երրորդով կ'ընտրէ Կ. Գ. Մարմինը:

9. Կեդր. Գ. Մ. ի անդամները կրնան Պատգմ. Ժողովին մասնակցիլ խորհրդակցական ձայնով:

XII

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՇԻՒՆԵՐՈՒ ՀԵՏ ԳՈՐԾ

ՈՒՆԵՑՈՂ ԲՈՂՈՐ ԱՆՁԵՐՈՒ ԵՒ

ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1. Ընկերութիւնս կիրարկած ըլլալով՝ դրամական հաշիւտութեան խստապահանջ սկզբունք մը՝ կ'պահանջէ, որ դրամական խնդիրներու հետ զործ ունեցող բոլոր մարմինները եւ անձինք հաշիւներ պահեն մաքուր եւ անառարկելի եղանակով մը: Բոլոր հաշիւները հիմնաւորւած պիտի ըլլան համապատասխան վաւերացուցութեամբ:

2. Ընկերութեան ընդհանուր զանձապահը ըն-

կերութեան զբաժները կտահէ Կեդրոնական Գ. Մ. ի կողմէ մատնանշւած պանքայի մը մէջ: Գանձապահը կրնայ պանքայէն զբաժ վերցնել միայն իր եւ ատենապետի ու քարտուղարի ստորագրութիւններով:

XIII

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

1. Ընկերութեան բոլոր մասնաճիւղերու, խմբերու, Կեդր. Գ. Մ. ի եւ Կրթական Մարմնի մօտ գտնւած գոյքերը եւ զբաժները կկազմեն ընկերութեան ամբողջական սեփականութիւնը:

XIV

ԼՈՒԾՈՒՄ

1. Ընկերութեան գործունէութեան վերջ տալու պարագային՝ եղած գոյքերու եւ զբաժներու վերաբերմամբ կարգադրութիւն կը լլայ Խորհրդային Հայաստանի անտեսական ներկայացուցչի կամ անոր կառավարութեան ունէ մէկ հեղինակաւոր ներկայացուցչի հրահանգին համեմատ:

XV

ԿԱՆՈՆԱԳՐԻ

ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆ, ՓՈՓՈԽՈՒՄ ԵՒ ՎԱԻԵՐԱՑՈՒՄ

1. Այս կանոնադրութիւնը գործադրութեան մէջ կ'մտնէ անմիջապէս:

2. Կանոնադրային ունէ նոր յօդւած կարելի է ընդունիլ եւ ունէ յօդւածի փոփոխութիւն կարելի է ընել միայն Պատգմ. Ժողովի քէններու երկու երրորդով:

Նիւ Եօք, Մայիս 1, 1922

(Վերջ)





ՀՀ Ազգային գրադարան



NL0227191

42.789

977